Ս.ՇՏԻԿՅԱՆ

ՍՐԱՆՔ ԱՌԱՅԺՄ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ ԵՆ

Փոքրիկ բարեկամ, քեզ անշուշտ ծանոթ է այն տհաճ զգացումը, երբ չես կարողանում լուծել, ասենք, հանձնարարված խնդիրը։ Տանը հանգստանալիս, կամ բակում խաղալիս, կամ անկողնում, երբ արդեն պատրաստվում ես քնել, դու մտովի դարձյալ հիշում ու վերհիշում ես խնդրի պայմանները, գումարում ես ու հանում, բաժանում, բազմապատկում... Բայց դու շատ կզարմանաս, եթե ասեմ, որ այդպիսի տհաճ վիճակ այսօր ապրում են շատ երկրների պրոֆեսորներ ու ակադեմիկոսներ, անուն ու կշիռ ունեցող համբավավոր գիտնականներ։ Իսկ դրա պատճառն այն է, որ մեկից ավելի են այն հանելուկները, որոնք այսօր դեռ մնում են չլուծված։

Այսօր մենք կխոսենք դրանցից մի քանիսի մասին։

Դու, անշուշտ, գիտես, որ Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում կար սարսափելի մի բերդ-բանտ «Բաստիլ» անունով, որը կառուցվել էր ճարտարապետ Դ'Օրբինոյի նախագծով, և որն էլ, ի դեպ, դարձավ իր իսկ նախագծած բերդ-բանտի առաջին կալանավորներից մեկը։ 1698 թվականի սեպտեմբերի 19-ին այստեղ՝ ուժեղացված պահակախմբով, բերեցին հանելուկային մի կալանավոր։ Վերջինս բարձրահասակ էր, բարեկազմ, սպիտակ մաշկ ուներ, ազատ խոսում էր ֆրանսերեն։ ՈՒշագրավն այն էր, որ կալանավորը դեմքին սև, թանձր կտորից կարված դիմակ ուներ, առջևի կողմից շարժական ծնոտով, որը հնարավորություն էր տալիս նրան ուտելիք ընդունել։ Դիմակը ծածկում էր կալանավորի ամբողջ գլուխը և հատուկ ամրակներով կոճկվում էր ծոծրակի մոտ։ Վերջինիս հետ խոսելու կամ նրան որևէ գործով դիմելու իրավունք ուներ միայն Բաստիլի բանտապետ Սեն-Մարսը. մյուսներին այդ բանն անելն արգելված էր մահվան սպառնալիքով։ Մահվան սպառնալիք էր սպասում նաև բոլոր նրանց, ում կմոտենար կամ խոսակցության կբռնվեր հանելուկային կալանավորը։

Մի անգամ կալանավորը ճաշից հետո գդալի պոչով ինչ-որ բան գրեց իր անագե ափսեի հատակին և օգտվելով բարեպատեհ առիթից, ափսեն պատուհանից նետեց ցած։

Բաստիլի ստորոտում գտնվող երիտասարդներից մեկը գտավ այն և ափսեն բերեց-հանձնեց Սեն-Մարսին։

- Դու կարդացի՞ր այստեղ գրածը, – ահեղ ձայնով հարցրեց բանտապետը։

- Մի թեթև, – պատասխանեց երիտասարդը։

Այս խոսակցությունից հազիվ կես ժամ անց երիտասարդին Սենա գետի ափին խեղդված գտան։

Համանման մի դեպք էլ տեղի ունեցավ նախորդից մոտ մի տարի անց։ Այս անգամ կալանավորը իր բանտային շապիկի վրա երկու տողի չափ ինչ-որ բան էր գրել և դարձյալ պատուհանից գցել էր ցած։ Շապիկն այս անգամ գտավ մի ձկնորս և բերելով Բաստիլ, տվեց Սեն-Մարսին։

- Դու կարդացե՞լ ես սա, – հարցրեց Սեն Մարսը։

- Ես անգրագետ եմ, – պատասխանեց ձկնորսը։

Չնայած այս հավաստիացմանը՝ ձկնորսին բաց չթողեցին։ Եվ միայն այն բանից հետո, երբ Սեն-Մարսը համոզվեց, որ ձկնորսն, իրոք, անգրագետ էր, և գտնված շապիկն, իրոք, ոչ ոք չէր տեսել, առավել ևս՝ վրայի գրածը կարդացել, արձակեց նրան, ասելով հետևյալ բազմանշանակալից խոսքերը.

- Գնա՛։ Եվ աղոթիր աստծուն, որ կարդալ չգիտեիր։

Չնայած այս անլուր խստություններին, հանելուկային կալանավորի հետ վարվում էին որոշակի հարգանքով, նույնիսկ քնքշությամբ։ Մի անգամ նա Սեն-Մարսից (կալանավորի բանտախուցը մտնելու և նրա հետ խոսելու իրավունք ուներ միայն նա) խնդրեց կիթառ (ըստ այլ տվյալների՝ թավջութակ) և համապատասխան նոտաներ՝ նվագելու համար։ Նրա խնդրանքը բավարարվեց անմիջապես։ Ի տարբերություն բանտի մյուս կալանավորների, որոնք զբոսանքի էին դուրս բերվում օրը մեկ անգամ, հանելուկային կալանավորը կարող էր օրվա ցանկացած պահին դուրս գալ բանտի բակը՝ զբոսնելու, իհարկե, համապատասխան պահակախմբով և միայն այն բանից հետո, երբ

բակում ոչ ոք չէր լինում։ Հայտնի է, վերջապես, ևս մի դեպք։ Կալանավորին հանդիպելու և նրա հետ խոսելու ցանկություն հայտնեց պետական-կառավարական բարձրաստիճան գործիչ, Ֆրանսիայի ներքին գործերի մինիստրության առաջին խորհրդական լորդ Բուալտրուեն։ Եվ ֆրանսիական պետության մասշտաբով անգամ նշանավոր այս պաշտոնյան՝ լորդը, կալանավորի հետ խոսում էր ոտքի վրա կանգնած և գլխարկը հանած։

Խորհրդավոր կալանավորը մահացավ 1703 թ. նոյեմբերի 19-ին, Բաստիլում և թաղվեց այդ բերդից փոքր-ինչ հեռու գտնվող Ս. Պետրոս եկեղեցու գավթում։ Չանցած մի քանի տարի եկեղեցու տարածքում «շինարարական աշխատանքներ կատարելու» հետևանքով անհետ կորավ նաև հանգուցյալի գերեզմանը...

Առաջին անգամ նրա մասին գրեց Վոլտերը 1751 թվականին հրատարակված իր մի աշխատության մեջ և նրան կոչեց «Երկաթե դիմակ»։ Եվ սկսած այդ ժամանակվանից առ այսօր, աշխարհիս բոլոր գիտնականներին տանջում է միևնույն հարցը. ո՞վ էր այս հանելուկային «Երկաթե դիմակը»։ Ինչո՞ւ էր նրա համար այդպիսի տարօրինակ պատիժ սահմանվել։ Ինչո՞վ բացատրել նրա նկատմամբ կիրառվող զարմանալի խստությունն ու տարօրինակ հոգատարությունը։ Այս և նման բնույթի այլ հարցերը այսօր պատասխան չունեն։

ՍՍՀՄ պատմությունից դու անցել ես Ռուսաստանի նշանավոր թագավոր Իվան IV Վասիլևիչ թագավորի մասին, որն իր եռանդուն գործունեության, բայց և խստաշունչ ու անհավասարակշիռ արարքների համար ստացել էր Իվան Ահեղ (Иван Грозный) մականունը։ Գիտես, անշուշտ, որ մի անգամ, զայրույթի հանկարծակի բռնկման պահին, նա սպանեց իր որդուն՝ թագաժառանգ Վասիլի Իվանովիչին և այդ մասին էլ նկար ունի ռուս հանճարեղ նկարիչ Իլյա Ռեպինը՝ «Իվան Ահեղն ու իր որդի Իվանը» վերնագրով։ Այս Իվան Ահեղ թագավորն, ահա, բիբլիոման էր, այսինքն՝ սիրում էր հին գրքեր հավաքել։ Չմոռանանք, որ նա ապրել ու գործել է 1530-1584 թվականներին և ուրեմն նրա հավաքած գրքերը, եթե չասենք բացարձակապես, համենայն դեպս գերակշիռ մասով

պետք է որ ձեռագիր գրքեր լինեին։ Այդ գրադարանի մասին մեզ հասած կցկտուր տեղեկություններից մեկն էլ այն է, որ «կողք-կողքի շարված էին մագաղաթակազմ, ծանրաշուք ձեռագիր գրքերը, որոնց նայելիս իսկ հիացմունքդ զսպել չէին կարողանում։ Դրանց թվում հազվագյուտ չէին այնպիսինները, որոնք տառերով չէին գրված, այլ զարդագրերով, թռչնանկարներով, կիսալուսիններով, օղակ-օղակ նկարներով և նման այլ ձևերով։ Դրանք, սակայն, չէին կարդացվում և ինքը՝ Օգոստափառ Միապետն անգամ (այսինքն՝ Իվան Ահեղը) դրանք կարդալ չէր կարողանում»։ Գիտենք նաև, որ ձեռագիր գրքերի այդ գրադարան մուտք ուներ միայն ինքը՝ թագավորը, որը հաճախ ամբողջ գիշերը լուսացնում էր մի որևէ ձեռագրի վրա կքած, մոմի աղոտ լույսի տակ։ Հեշտությամբ կարող եք պատկերացնել, փոքրիկ բարեկամներ, թե ինչպիսի մեծ արժեք էր ներկայացնում Իվան Ահեղի ձեռագրերի հավաքածուն և ինչպիսի անգնահատելի գանձ կլիներ այն այսօր՝ մեր մասնագետ-ուսումնասիրողների համար։ Սակայն աշխարհ եկավ 1548 թվականի մարտի 18-ը՝ Իվան Ահեղ թագավորը վախճանվեց Մոսկվայում, կատարվեց ճոխ ու հանդիսավոր թաղում և նրա մահվանից մի քանի օր անց տարածվեց չարագուշակ լուրն այն մասին, որ թագավորի ձեռագիր գրքերի արժեքավոր գրադարանը... կորել է։ Այո՛, այո՛, գրադարանը անհետացել էր։ Պալատի այն սենյակ-դահլիճը, որտեղ նրանք շարված էին «կողք կողքի», կատարելապես դատարկ էր։ Կարծիք հայտնվեց, որ Իվան Ահեղը զայրույթի հանկարծակի բռնկման հերթական պահին այրել է իր ամբողջ գրադարանը, ուրիշներն էլ պնդեցին, որ զգալով իր մոտալուտ մահը թագավորն այն թաքցրել Կրեմլի խոր ու խավար սենյակներից մեկում և ուրեմն անհրաժեշտ է Կրեմլի ամբողջ զբաղեցրած տարածքում մասնագիտական որոնումներ կատարել։ Արդեն մեր ժամանակներում պատմաբանները միտք հայտնեցին, որ Իվան Ահեղն իր գրադարանը նվիրել է արտասահմանյան մեծահարուստ իշխանական տներից մեկն ու մեկին և այլն։ Որքա՞ն են ճիշտ այս կարծիքները, ի՞նչ եղավ Իվան Ահեղ թագավորի գրադարանը, այդ ի՞նչ ձեռագրեր էին, որոնք տառերով չէին գրված, այլ զարդագրերով ու կիսալուսիններով։ Արդեն մի քանի հարյուր տարի շարունակ տրվող այս հարցերը դեռ պատասխան չունեն։

1921 թվականին անգլիացի բևեռախույզ Հովանդ Բյուրի գլխավորած գիտական արշավախումբը ճանապարհ ընկավ դեպի Էվերեստի լեռնաշղթան, նրա ամենաբարձր գագաթի՝ Ջոմոլունգմայի շրջակայքում հետազոտություններ կատարելու համար։ Այստեղ էլ, շուրջ ութ հազար մետր բարձրության վրա, Բյուրը ներբանների տարօրինակ հետքեր հայտնաբերեց։ Դրանք պարզորոշ էին, հստակ, շատ նման էին մարդու մերկ ոտքերի հետքերի։ Որոշակիորեն դրոշմված էին կրունկները, ոտնամատները, բթամատը, բայց դրանք բոլորը չափազանց տձև էին ու շատ մեծ։ Չափելով ոտնահետքի՝ ձյան մեջ խրվածության աստիճանը և նրա մեծությունը, Բյուրը հատուկ հաշվարկներով կարողացավ որոշել հետևյալը. այս արարածը ունեցել է 150 կիլոգրամ կշիռ, մինչև երկու մետրանոց հասակ և տեղաշարժվել է ոստյունանման քայլերով։ Արշավախմբի՝ այս կապակցությամբ կատարված հարցուփորձերը է՛լ ավելի զարմանալի փաստեր բացահայտեցին։ Էվերեստի ստորոտում ապրող բնակիչները հաստատեցին, որ իրոք, սարի անհասանելի ու անմատչելի կիրճերում ապրում են վիթխարահասակ մարդանման արարածներ, որոնք, սակայն, գաղտնակյաց կյանք են վարում, շրջագայության են դուրս գալիս հիմնականում գիշերային ժամերին և, ընդհանրապես, խուսափում են մարդկանց հետ հանդիպելուց։ Պարզվեց նաև, որ Էվերեստի ստորոտում ապրող բնակիչների թվում քիչ չեն եղել մարդիկ, որոնք պատահաբար տեսել են նրանց։

Հովարդ Բյուրի կատարած՝ վերոհիշյալ ոտնահետքերի լուսանկարները և տեղաբնակների պատմածների գրառումները, որոնք նա հրատարակեց գիտական ամսագրում, մտքերի փոթորիկ հարուցեցին։ Նախ, պարզվեց, որ «Ձյունների մարդուն» տեսել էին ոչ միայն Էվերեստի ու նրան շրջապատող լեռների շրջանում, այլև Հյուսիսային Չինաստանում, Կոլայի թերակղզու ձյունապատ տարածքներում, Կանադայի հյուսիսում և անգամ Կովկասյան լեռներում, և հանդիպել էին երբեմն 4-5 «հոգուց» բաղկացած խմբերով։ Ականատեսների վկայությունները, հիմնականում, լրացնում էին իրար և հաղորդում էին այն, ինչ ասվեց վերևում։ 1967 թվականին երկու ամերիկացի բևեռախույզներ՝ Ռոջեր Պատերսոնը և Ռոբերտ Հիմլինը, իրենց բառերով ասած՝ «մաղով անց կացրեցին» ամբողջ Էվերեստի շրջակայքը, սակայն ոչինչ չգտան և հայտարարեցին, որ «Ձյունների մարդու մասին ասվածը դատարկ խոսակցություն է»։

Սակայն նույն այդ թվականին Կոլա թերակղզու հյուսիսում՝ Իմադրա լճի ափին գտնվող պիոներական ճամբարի երեխաները պատմեցին «Կոմսոմոլսկայա պրավդայի» թղթակիցներին, որ իրենք հանդիպել են «Ձյունների մարդուն» և այն էլ մի քանի անգամ։ «Նա առանց խտրության ուտում էր այն բոլոր մնացորդները, որոնք որպես ավելցուկ մենք թափել էինք ճամբարից հեռու գտնվող բացատում։ Բարձրահասակ էր, ամբողջ մեջքը, թիկունքը, ձեռքերն ու ոտքերը ծածկված էին շիկավուն, թավ մազերով, իսկ փորի վրա և պարանոցին մազ գրեթե չկար։ Հետո նա նկատեց մեզ, մի պահ նայեց իր չար, կատաղի աչքերով ու փախավ՝ ականջ ծակող սուլոց արձակելով։ Մենք շատ վախեցանք»։

Համանման փաստեր, փոքրիկ բարեկամ, կարելի է էլի բերել, ասենք դու էլ մեր թերթերում ու ամսագրերում երևի կարդացել ես այդ մասին։ Եվ արդեն քանի տարի է, որ աշխարհի բոլոր գիտնականները տալիս են միևնույն հարցը. գոյություն ունի՞ թե ոչ այս հանելուկային «Ձյունների մարդը»։ Եվ եթե այո, ապա ի՞նչ է ներկայացնում իրենից։ Կապիկների դասի ներկայացուցի՞չ է, թե գիտությանն առ այսօր անհայտ կապկանմանների մի նոր տեսակ։ Հարցերն այսպես կարելի է շարունակել, սակայն նրանց գիտական պատասխանները դեռ չկան։

Այսպիսի հանելուկային շատ երևույթներ կան նաև հայ գրականության մեջ, որոնք սպասում են իրենց լուծմանը։ Հաջորդ անգամ կանդրադառնանք այդ հարցերին։ Իսկ առայժմ՝ այսքանը։

Պիոներ կանչ, 1958, № 84, հոկտեմբերի 19